ՈՒսանողների գնահատման նոր բազմագործոն համակարգի արդյունավետության վերաբերյալ ուսանողների կարծիքների
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ըստ կրթական ծրագրերի)

/31.08.23թ./

Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից 2022-23 ուստարվա մայիսին հավաքագրվել և վերլուծվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 6 (12-ից) կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների կարծիքները գնահատման նոր բազմագործոն համակարգի (ներդրվել է 2022թ.-ի սեպտեմբերից) արդյունավետության վերաբերյալ, որի նպատակն էր պարզել ուսանողների կարծիքները մասնաճյուղում գործող գնահատման բազմագործոն համակարգի, նրանում ներառված գնահատման բաղադրիչների վերաբերյալ, ինչպես նաև պարզել ինքնուրույն աշխատանքներից, դրանց իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Ուսումնասիրությունն իրականացվել է հանդիպում-քննարկումների միջոցով, որի ավարտին ուսանողները պատասխանել են բաժնի կողմից մշակված հարցերին: Հարցաշարը ներառել է 14 բաց հարցեր, որոնց միջոցով ակնկալել ենք բացահայտել, նախ, թե գնահատման համակարգում գնահատման տարբեր բաղադրիչների առկայությունը որքանո՞վ է խթանում և բարձրացնում ուսանողների սովորելու մոտիվացիան, և որքանո՞վ են այդ բաղադրիչները թույլ տալիս ճիշտ չափել ուսանողի ձեռքբերումները, երկրորդ, գնահատել հանձնարարվող ինքնուրույն աշխատանքների նկատմամբ ուսանողների հետաքրքրվածությունը, նրանց բարդությունը, արդյունավետությունը և այլն, նաև հավաքագրել ուսանողների առաջարկները բաղադրիչների փոփոխության, նոր բաղադրիչների հնարավոր ավելացման վերաբերյալ:

Բաժինը, մինչև ուսանողների հետ հանդիպումը, ըստ կրթական ծրագրերի կազմել է 1-ին և 2-րդ կիսամյակներում դասավանդվող և գնահատման ձևերից որևէ ձևով գնահատվող դասընթացներում գնահատման տարբեր բաղադրիչների ներառման վերաբերյալ հաշվետվություն (***Հավելված 1***), որը մանրամասն ներկայացնում է գնահատվող յուրաքանչյուր դասընթացի կրեդիտների քանակը, գնահատման բաղադրիչները և դրանց տրվող միավորները, նաև նշված է դասընթացների քանակը, որոնք ներառում են և՛ «ինքնուրույն աշխատանք», և՛ «ընթացիկ ստուգում» բաղադրիչները միաժամանակ:

Ըստ այդ վերլուծության պարզել ենք, որ 2022-23 ուստարում բոլոր կրթական ծրագրերի 1-ին կուրսում դասավանդվող ընդհանուր **86** դասընթացներից **66-ի** (76.7%) գնահատման բաղադրիչների ցանկում ներառված է «ինքնուրույն աշխատանք» բաղադրիչը, 55-ում (64%)՝ «ընթացիկ ստուգում» բաղադրիչը և **42-ում** (48.9%)՝ «մասնակցություն» բաղադրիչը:

Վերլուծության մեջ ցույց է տրված նաև, թե քանի դասընթացներ են ներառում և «ինքնուրույն աշխատանք» և «ընթացիկ ստուգում» բաղադրիչները միաժամանակ, դրանց քանակը 39-նն է (45.4%): Այսինքն դասընթացների գրեթե կեսում դասախոսները նախընտրել են ներառել այդ երկու կարևոր բաղադրիչները՝ ուսանողների ինքնուրույն աշխատելու, գիտելիքները և կարողությունները զարգացնելու, ապագայում հետազոտական աշխատանքներին նախապատրաստելու համար:

Արդյունքները ցույց են տալիս, որ մի քանի կրթական ծրագրերում (12-ից 5-ում) և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակում գնահատվող դասընթացների քանակը 3-ից ավել է և դրանց հիմնական մասը ներառում է ինքնուրույն աշխատանքի գնահատման բաղադրիչ: Իսկ 3 կրթական ծրագրերում՝ «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և

մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» գնահատվող և ակնհայտ է այդ բաղադրիչները պարունակող դասընթացների քանակը 10 է, որը 1-ին կուրսեցու համար, ենթադրում ենք, որ շատ է: Այս փաստի վրա հրավիրում ենք ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների ուշադրությունը:

Այժմ ներկայացնենք ուսանողների հետ հանդիպման և հարցման արդյունքները:

Բաժինը հանդիպում քննարկումներ է ունեցել միայն 6 կրթական ծրագրերի առաջին կուրսեցիների հետ, մյուս կրթական ծրագրերի ուսանողների հետ հանդիպումները տարբեր պատճառներով հնարավոր չի եղել իրականացնել.

N	**Կրթական ծրագրերի անվանումը**	**Մասնակիցների քանակը**
1.	Պատմություն	11
2.	Հոգեբանություն	9
3.	Զբոսաշրջություն	6
4.	Դիզայն	5
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	10
6.	Հայոց լեզու և գրականություն	8

Նշենք, որ ուսումնասիրությանը մասնակցած բոլոր կրթական ծրագրերի առաջին կուրսեցիները դրական են համարում գնահատման բազմագործոն համակարգի կիրառությունը ուսանողների ձեռքբերումների գնահատման համար՝ պատասխանելով հարցերին «այո» և դրա համար նշելով բավականին փաստարկներ, մասնավորապես, նրանք գտնում են, որ յուրաքանչյուր բաղադրիչի շրջանակներում իրականացված աշխատանքներն ավելացնում են իրենց մասնագիտական գիտելիքները, զարգացնում են ինքնուրույն աշխատելու, մտածելու և գրականության հետ աշխատելու կարողությունները, ինչի արդյունքում էլ դասախոսի համար պարզ է դառնում ուսանողի կարողությունը: Նրանց մեծամասնությունը գտնում է, որ գնահատման համակարգում ինքնուրույն աշխատանքների բաղադրիչի առկայությունը կարևոր է և արդարացված, որովհետև այն հնարավորություն է տալիս ավելի լավ ընկալել դասընթացը, իսկ որոշ թեմաների շրջանակներում ձեռք բերել խորը գիտելիքներ ու կարողություններ:

Իսկ ահա գնահատման բազմագործոն համակարգում բաղադրիչների առկայության հետ կապված բավականին խնդիրներ են նշել «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի առաջին կուրսեցիները, որոնց կանդրադառնանք առանձին հարցերի վերլուծության շրջանակներում: Այստեղ հրավիրում ենք հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի և դասախոսների ուշադրությունը, որպեսզի հնարավորինս պարզաբանվի, թե ի՞նչն է հիմք հանդիսացել դժգոհության համար, պարզել, թե ինչպե՞ս են կազմակերպվում և գնահատվում բաղադրիչները և որոնց իրականացման հետ կապված ուսանողների մոտ առաջացել են խնդիրներ:

Այժմ ներկայացնենք հանդիպում-քննարկումների և հարցման արդյունքների վերլուծությունն ըստ բարձրաձայնված հարցերի:

1. Գտնու՞մ եք, որ գնահատման համակարգում գնահատման տարբեր բաղադրիչների առկայությունը խթանում է ուսանողին և բարձրացնում սովորելու նրա մոտիվացիան:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	10		1
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	6		
4.	Դիզայն	5		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	10		
6.	Հայոց լեզու և գրականություն	2		6

Հարցմանը մասնակցած «Պատմություն», «Հոգեբանություն», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի առաջին կուրսերի բոլոր ուսանողները դրական են արձագանքել այն փաստին, որ գնահատման համակարգում գնահատման տարբեր բաղադրիչների առկայությունը խթանում է ուսանողին և բարձրացնում սովորելու նրանց մոտիվացիան:

Իսկ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները գտնում են, որ գնահատման տարբեր բաղադրիչների կիրառությունն ավելի շատ ծանրաբեռնում է ուսանողին և որոշ չափով ձևական բնույթ է կրում, բավականին ժամանակատար են, չեն խթանում ուսանողին, արդյունավետ չեն ընթացիկ քննություններով դասընթացների համար:

2. Գտնու՞մ եք, որ ուսանողների առաջադիմության վերահսկման գործընթացների համար կիրառվող այդ բաղադրիչները թույլ են տալիս ճիշտ չափել ուսանողի ձեռքբերումները:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
7.	Պատմություն	10		1
8.	Հոգեբանություն	9		
9.	Զբոսաշրջություն	4	2	
10.	Դիզայն	5		
11.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	6		4
12.	Հայոց լեզու և գրականություն	3	3	2

«Պատմություն», «Հոգեբանություն», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների կարծիքով ուսանողների առաջադիմության վերահսկման գործընթացների համար կիրառվող բաղադրիչները թույլ են տալիս ճիշտ չափել ուսանողի ձեռքբերումները, որովհետև դրանք կիրառելով պարզ է դառնում ուսանողի կարողությունը, իսկ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները գտնում են, որ ոչ բոլոր դեպքերում է բաղադրիչների կիրառությունը արդյունավետ, քանի որ հանձնարարվող առաջադրանքները պահանջում են ավելին, քան իրենց ձեռք բերած գիտելիքներն են, կամ որոշ տեխնիկական խնդիրներ երբեմն խանդոզարում են պատշաճ իրականացրել առաջադրանքները և այլն:

3. Այդ բաղադրիչներից որոնք են ըստ ձեզ պարտադիր, իսկ որո՞նք եք գտնում, որ ավելորդ են:

Այն հարցին, թե բաղադրիչներից որո՞նք են ըստ ձեզ պարտադիր, իսկ որոնք՝ ոչ, մասնավորապես.

- «Պատմություն» կրթական ծրագրի ուսանողները նշել են, որ ինքնուրույն աշխատանքները պարտադիր են, իսկ պահանջվող տեսանյութերը ավելորդ են,
- «Զբոսաշրջություն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողները գտնում են, որ և՛ «ինքնուրույն աշխատանքները», և՛ «ընթացիկ ստուգումները» պարտադիր են, կամ համենայն դեպքս ցանկալի են,
- «Հոգեբանություն» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսանողների կարծիքով բոլոր բաղադրիչներն էլ պարտադիր են.
- իսկ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների կարծիքներն այդ առումով տարբեր են, նրանցից 3-ը գտնում են, որ ընթացիկ ստուգումներն ավելորդ են, և նրանցից մեկը դա հիմնավորում է ընթացիկ քննությունների առկայության հանգամանքով, 2-ը ավելորդ են համարում ինքնուրույն աշխատանքները, 1-ը նույնիսկ եզրափայիչ քննությունը:

4. Դուք գնահատման համակարգում նոր բաղադրիչ կավելացնեի՞ք: Եթե այո, ապա ի՞նչ բաղադրիչ կավելացնեիք:

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները բավարար են համարում ներկայիս գնահատման համակարգում գործող գնահատման տարբեր բաղադրիչների առկայությունը, շեշտելով, որ ամեն ինչ կանոնակարգված է և որ նրանք բարելավում են կրթության որակը, և նոր բաղադրիչ ավելացնելու անհրաժեշտություն չկա:

5. Գտնու՞մ եք, որ գնահատման համակարգում ինքնուրույն աշխատանքների գնահատման բաղադրիչի առկայությունը կարևոր է: Ինչու՞:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	11		
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	6		
4.	Դիզայն	5		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	9		
6.	Հայոց լեզու և գրականություն	2		5

«Պատմություն», «Հոգեբանություն», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողները կարևոր են համարում գնահատման համակարգում ինքնուրույն աշխատանքների գնահատման բաղադրիչի առկայությունը, փաստելով, որ այն մոտիվացնում է ուսանողին աշխատանքը գերազանց կատարելու համար, ուսանողը դառնում է ավելի պարտավորված, խթանում է ուսանողների ինքնուրույն գործունեություն ծավալելուն և մտածողության զարգացմանը, թեման դառնում է ավելի ընկալելի, իսկ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները բացասական են արձագանքում վերոնշյալ հարցին, կարևորություն չտալով ինքնուրույն աշխատանքների

գնահատման բաղադրիչի առկայությանը, և առանձին-առանձին յուրովի մեկնաբանում են, նշելով, որ շատ են տրվող ինքնուրույն աշխատանքները, նրանք կրում են ձևական բնույթ, հանդիսանում են առիթ՝ միավոր վաստակելու համար, որ ինքնուրույն աշխատանքները կարևոր են միայն եզրափակիչ գնահատմամբ դասընթացների համար:

6. Ինչպե՞ս եք վերաբերվում ինքնուրույն աշխատանքներին, գո՞հ էիք հանձնարարված ինքնուրույն աշխատանքների բովանդակությունից:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	9	1	1
2.	Հոգեբանություն	8		1
3.	Զբոսաշրջություն	6		
4.	Դիզայն	4		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	8		2
6.	Հայոց լեզու և գրականություն	2	4	1

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները հիմնականում գոհ են հանձնարարված ինքնուրույն աշխատանքների բովանդակությունից: «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներնն ընդհանուր առմամբ գոհ են հանձնարարված ինքնուրույն աշխատանքների բովանդակությունից, սակայն համարում են, որ ինքնուրույն աշխատանքներն ավելորդ են և ժամանակատար, և անհրաժեշտ են ոչ բոլոր առարկաների դեպքում:

7. Գտնու՞մ եք, որ բոլոր դասընթացների շրջանակներում անհրաժեշտ է կատարել ինքնուրույն աշխատանք, որովհետև (շարունակել միտքը)…….

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	ոչ բոլոր	ոչ
1.	Պատմություն	3	2	2
2.	Հոգեբանություն	6	2	
3.	Զբոսաշրջություն	2	4	
4.	Դիզայն	2	2	
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	8		2
6.	Հայոց լեզու և գրականություն		3	4

Նշված հարցի հետ կապված «Պատմություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ուսանողների մեծ մասը գտնում է, որ ինքնուրույն աշխատանք անհրաժեշտ է կատարել միայն մասնագիտական առարկաներից, իսկ մյուս մասը գտնում է, որ ինքնուրույն աշխատանքն անհրաժեշտ է կատարել նաև մյուս դասընթացներից, քանի որ դրանք ձևավորում են ուսանողների ինքնուրույնությունը: «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների կարծիքով անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանքներ կատարել միայն մասնագիտական առարկաներից, իսկ «Հոգեբանություն», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողները կարևորում են ինքնուրույն աշխատանքների կատարումը բոլոր դասընթացներից, ըստ նրանց այն ամրապնդում և հարստացնում է ուսանողների գիտելիքները, բարձրացնում կրթության որակը, զարգացնում ուսանողի երևակայությունը և հմտությունները:

8. Ինքնուրույն աշխատանքների համար որոշված միավորները համահունչ էին ձեր կատարած աշխատանքին:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	6	1	3
2.	Հոգեբանություն	8	1	
3.	Զբոսաշրջություն	6		1
4.	Դիզայն	5		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	4		6
6.	Հայոց լեզու և գրականություն	2		5

Ուսանողների մի մասը գտնում է, որ ինքնուրույն աշխատանքների համար որոշված միավորները համահունչ էին իրենց կատարած աշխատանքին, մի մասն էլ գտնում է, որ համահունչ չէին տեխնիկական խնդիրների պատճառով, որի հետևանքով իջնում է միավորը, կամ որոշ դասընթացների համար համապատասխան չէին, կամ կախված էին թեմայից, թեմայի ծավալից և այլն:

9. Բավարարվա՞ծ եք ինքնուրույն աշխատանքների համար ստացած ձեր գնահատականներից:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	9		1
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	6		
4.	Դիզայն	5		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	9		1
6.	Հայոց լեզու և գրականություն	2		5

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողներն իրենց բավարարվածությունն են հայտնել ինքնուրույն աշխատանքների համար ստացած գնահատականներից, բացառությամբ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների:

10. Ըստ ձեզ ճի՞շտ էին ընտրված տարբեր բաղադրիչների գնահատման համար ընտրած մեթոդները և ձևերը:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	4		6
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	6		1
4.	Դիզայն	5		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	8		2
6.	Հայոց լեզու և գրականություն			7

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողների կարծիքով ճիշտ էին ընտրված տարբեր բաղադրիչների գնահատման մեթոդները և ձևերը, իսկ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողները գտնում են, որ ճիշտ չեն ընտրված:

11. Գտնու՞մ եք, որ գնահատման գործող համակարգն ապահովում է գնահատման օբյեկտիվություն: Բավարարվա՞ծ եք ձեր ձեռքբերումների գնահատման օբյեկտիվությունից:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	9		1
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	5	1	
4.	Դիզայն		4	
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	7		3
6.	Հայոց լեզու և գրականություն	1	5	

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները գտնում են, որ գնահատման համակարգում գնահատման օբյեկտիվությունը հիմնականում ապահովված է :

12.Գտնու՞մ եք, որ գնահատման գործող համակարգն ապահովում է գնահատման թափանցիկություն: Բավարարվա՞ծ եք ձեր ձեռքբերումների գնահատման թափանցիկությունից:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	9		1
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	5	1	
4.	Դիզայն		4	
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	7		3
6.	Հայոց լեզու և գրականություն	1	5	

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները գտնում են, որ գնահատման համակարգում գնահատման թափանցիկությունը հիմնականում ապահովված է :

13.Ձեր ստացած գնահատականներն արտացոլու՞մ են արդյոք ձեր իրական ձեռքբերումները: Եթե ոչ, ապա ինչու՞:

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	7		3
2.	Հոգեբանություն	6	3	
3.	Զբոսաշրջություն	5	1	
4.	Դիզայն		4	
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	9		1
6.	Հայոց լեզու և գրականություն	1	1	4

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները գտնում են, որ ստացած գնահատականները հիմնականում արտացոլում են իրենց իրական ձեռքբերումները, իսկ ըստ «Դիզայն» և «Հայոց

լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների աշխատանքը լիարժեք չի գնահատվում, գնահատականները երբեմն չեն համապատասխանում կատարված աշխատանքին։

14.Իսկ ընդհանրապես, գտնու՞մ եք, որ առաջադիմության ընթացիկ վերահսկման և միջանկյալ գնահատման համար օգտագործվող գնահատման նյութերը մշակված են գործնական՝ պրակտիկ իրավիճակների հիման վրա։

N	Կրթական ծրագրի անվանումը	Պատասխաններ		
		այո	մասամբ	ոչ
1.	Պատմություն	5		1
2.	Հոգեբանություն	9		
3.	Զբոսաշրջություն	3		3
4.	Դիզայն	3		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	7		1
6.	Հայոց լեզու և գրականություն	4	3	

Բոլոր կրթական ծրագրերի ուսանողները հիմնականում գտնում են, որ առաջադիմության ընթացիկ վերահսկման և միջանկյալ գնահատման համար օգտագործվող գնահատման նյութերը մշակված են պրակտիկ իրավիճակների հիման վրա։

Ուսանողները նշել են նաև գնահատման բազմագործոն համակարգի դրական և բացասական կողմերն, և կատարել առաջարկներ։

Ուսանողները նշել են հետևյալ բացասական կողմերը.

1. Գնահատման տարբեր բաղադրիչների կիրառությունն ավելի շատ ծանրաբեռնում է ուսանողին, բավականին ժամանակատար են, չեն խթանում ուսանողին, արդյունավետ չեն ընթացիկ քննություններով առարկաների համար («Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներ),
2. Ոչ բոլոր դեպքերում են բաղադրիչների կիրառությունը արդյունավետ, քանի որ հանձնարարվող առաջադրանքները պահանջում են ավելին, քան իրենց ձեռք բերած գիտելիքներն են («Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներ),
3. Գնահատման տարբեր բաղադրիչների կիրառության մեջ ավելորդ են տեսանյութային տարբերակները («Պատմություն», կրթական ծրագրի ուսանողներ),
4. Աշխատանքը լիարժեք չի գնահատվում, գնահատականները երբեմն չեն համապատասխանում կատարված աշխատանքին («Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներ)։

Նշել են հետևյալ դրական կողմերը.

1. Գնահատման տարբեր բաղադրիչների առկայությունը խթանում է ուսանողին և բարձրացնում սովորելու նրա մոտիվացիան («Պատմություն», «Հոգեբանություն», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողները),

2. Բաղադրիչները թույլ են տալիս ճիշտ չափել ուսանողի ձեռքբերումները, որովհետև դրանք կիրառելով պարզ է դառնում ուսանողի կարողությունը,
3. Ամեն ինչ կանոնակարգված է և որ նրանք բարելավում են կրթության որակը,
4. Ինքնուրույն աշխատանքների գնահատման բաղադրիչի առկայությունը մոտիվացնում է ուսանողին աշխատանքը գերազանց կատարելու համար, ուսանողը դառնում է ավելի պարտավորված, խթանում է ուսանողների ինքնուրույն գործունեություն ծավալելուն և մտածողության զարգացմանը, թեման դառնում է ավելի ընկալելի, հարստացնում է ուսանողների գիտելիքները, զարգացնում ուսանողի երևակայությունը և հմտությունները,
5. Ստացած գնահատականները հիմնականում արտացոլում են իրենց իրական ձեռքբերումները։

Առաջարկում են.

1. Ինքնուրույն աշխատանքներ կատարել միայն մասնագիտական դասընթացներից («Պատմություն», «Զբոսաշրջություն», «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողներ),
2. Ինքնուրույն աշխատանքները ներառել միայն եզրափակիչ գնահատմամբ դասընթացների համար,(«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներ)։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

Հավելված 1

2022-23 ուստարվա 1-ին կուրսի 2 կիսամյակներում դասավանդվող դասընթացներում գնահատման տարբեր բաղադրիչների ներառման վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Կրթական ծրագիր՝ Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր -1	1	9	**0**	3	0	եզ.գն.
2.	Դիսկրետ մաթեմատիկա - 1	1	4	**6**	**5**	**1**	առ.եզ/գն
3.	ԷՀՄ և ծրագրավորում – 1	1	4	**3**	2	0	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**2**	**2**	**1**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**2**			
4.	Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր -2	2	6	**4**	0	0	եզ.գն.
5.	Դիսկրետ մաթեմատիկա - 2	2	4	**3**	0	0	եզ.գն.
6.	ԷՀՄ և ծրագրավորում – 2	2	5	**3**	2	0	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**3**	**1**	**0**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**1**			

2.Կրթական ծրագիր՝ Ֆինանսներ (ըստ ոլորտի)

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Մաթեմատիկական անալիզ-1	1	6	**0**	3	0	եզ.գն.
2.	Տնտեսագիտության տեսություն-1	1	6	**1**	1	1	եզ.գն.
3.	Գծային հանրահաշիվ և անալիտիկ երկրաչափություն	1	4	**0**	3	0	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**1**	3	1	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			1			
4.	Մաթեմատիկական անալիզ-2	2	5	**0**	3	0	եզ.գն.
5.	Տնտեսագիտության տեսություն-2	2	6	**1**	1	1	եզ.գն.
6.	Տնտեսագիտական ինֆորմատիկա – 1	2	3	**4**	**7**	**1**	**առ.ընթ/գն**
	Բաղադրիչի ներառման քանակ			**2**	**3**	**2**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**2**			

3.Կրթական ծրագիր՝ Զբոսաշրջություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Զբոսաշրջության հիմունքներ	1	5	0	4	0	եզ.գն.
2.	Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	1	3	8	4	0	առ.եզ/գն
3.	Մարդը և նրա պահանջմունքները	1	3	8	4	0	առ.եզ/գն
4.	Երկրագիտություն	1	4	8	4	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			3	4	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			3			
5.	Հայ ազգագրություն	2	4	8	0	3	առ.եզ/գն
6.	Տնտեսագիտություն	2	4	3	0	3	եզ.գն.
7.	Ռեկրեացիայի աշխարհագրություն	2	4	8	4	0	առ.եզ/գն
8.	Տեղեկատվական տեխնոլոգիաները զբոսաշրջության մեջ	2	3	8	4	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			4	2	2	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			2			

4. Կրթական ծրագիր՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Մաթեմատիկա -1	1	5	0	0	3	եզ.գն.
2.	Մայրենի լեզու-1	1	4	8	0	3	առ.եզ/գն
3.	Հոգեբանության հիմունքներ	1	3	8	0	3	առ.եզ/գն
4.	Մանկավարժության հիմունքներ-1	1	3	8	0	3	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			3	0	4	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			0			
1.	Մաթեմատիկա -2	2	4	0	0	3	եզ.գն.
2.	Մայրենի լեզու-2	2	4	0	0	3	եզ.գն.
3.	Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա	2	3	8	0	3	առ.եզ/գն
4.	Մանկավարժության հիմունքներ-2	2	4	8	0	3	առ.եզ/գն
5.	Տարիքային հոգեբանություն	2	4	8	0	3	առ.եզ/գն
6.	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	2	2	8	0	3	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			4	0	6	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			0			

5.Կրթական ծրագիր՝ Հոգեբանություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Մասնագիտության ներածություն	1	2	8	3	0	առ.ընթ/գն
2.	Հոգեբանության հիմունքներ	1	5	4	0	0	եզ.գն.
3.	Հոգեբանական հետազոտություն-ների մեթոդաբանական հիմունքներ	1	5	4	0	0	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			3	1	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			1			
1.	ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա	2	5	4	0	0	եզ.գն.
2.	Իմացական գործընթացների հոգեբանություն -1	2	7	4	0	0	եզ.գն.
3.	Հոգեբանության պատմություն	2	5	4	0	0	եզ.գն.
4.	Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն	2	4	6	5	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			4	1	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			1			

6.Կրթական ծրագիր՝ Հայոց լեզու և գրականություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Ժամանակակից հայոց լեզվի հնչյու-նաբանություն և բառագիտություն-1	1	4	5	6	0	առ.եզ/գն
2.	Գրաբար -1	1	3	6	5	0	առ.եզ/գն
3.	Հայ ժողովրդի բանահյուսություն	1	5	4	0	0	եզ.գն.
4.	Գրականագիտության ներածություն	1	3	8	3	0	առ.ընթ/գն
5.	Խոսքային էթիկետ և գործնական հաղորդակցման հմտություններ	1	2	8	3	0	առ.ընթ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			5	4	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			4			
1.	Ժամանակակից հայոց լեզվի հնչյու-նաբանություն և բառագիտություն-2	2	4	2	2	0	եզ.գն.
2.	Գրաբար -2	2	3	6	5	0	առ.եզ/գն
3.	Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն	2	7	4	0	0	եզ.գն.
4.	Լեզվաբանության հիմունքներ	2	3	6	5	0	առ.եզ/գն
5.	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	2	2	8	4	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			5	4	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			4			

7.Կրթական ծրագիր՝ Անգլերեն լեզու և գրականություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Լատիներեն	1	2	3	8	1	առ.եզ/գն
2.	Անգլերեն-1	1	9	1	2	1	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**2**	**2**	**2**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**2**			
3.	Անգլերեն-2	2	10	1	2	1	եզ.գն.
4.	Ֆրանսերեն-1	1	9	1	2	1	եզ.գն.
5.	Ֆրանսերեն-2	2	10	1	2	1	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**3**	**3**	**3**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**3**			

8.Կրթական ծրագիր՝ Ֆրանսերեն լեզու և գրականություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Լատիներեն	1	2	3	8	1	առ.եզ/գն
2.	Ֆրանսերեն-1	1	9/8	1	2	1	եզ.գն.
3.	Անգլերեն-1	1	9/8	1	2	1	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			3	3	3	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			3			
4.	Ֆրանսերեն-2	2	10	1	2	1	եզ.գն.
5.	Անգլերեն-2	2	10	1	2	1	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			2	2	2	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			2			

9.Կրթական ծրագիր՝ Ռուսաց լեզու և գրականություն

	Դասընթացի անունը	կիս-ամյակ	կրե-դիտ	գնահատման բաղադրիչներ՝ միավոր			Նշում-ներ
				ինքն. աշխ.	ընթ. ստուգ.	մասնակ-ցություն	
1.	Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-1	1	6	**0**	8	3	առ.եզ/գն
2.	Լեզվաբանության ներածություն	1	3	**0**	8	3	առ.եզ/գն
3.	Ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանություն	1	4	**0**	8	3	առ.եզ/գն
4.	Մանկավարժություն-1	1	2	**8**	3	0	առ.ընթ/գն
5.	Գրականագիտության ներածություն	1	3	**0**	8	3	առ.եզ/գն
6.	ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում	1/2	3	**0**	8	3	առ.եզ/գն

	Բաղադրիչի ներառման քանակ			**1**	6	5	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			1			
1.	Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-2	2	5	**0**	8	3	առ.եզ/գն
2.	Ժամանակակից ռուսաց լեզվի բառագիտություն	2	4	**0**	8	3	առ.եզ/գն
3.	Մանկավարժություն-2	2	5	**4**	0	0	եզ.գն.
4.	Ռուս գրականության պատմություն (ռուս բանահյուսություն, 18-րդ դարի գրակ.)	2	5	**4**	0	0	եզ.գն.
	Բաղադրիչի ներառման քանակ			**2**	2	2	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			0			

10. Կրթական ծրագիր՝ Պատմություն

	Դասընթացի անունը	**կիս-ամյակ**	**կրե-դիտ**	**գնահատման բաղադրիչներ՝ միավոր**			Նշում-ներ
				ինքն. աշխ.	**ընթ. ստուգ.**	**մասնակ-ցություն**	
1.	Հայաստանի պատմական աշխարհագրություն և հայոց պատմություն	1	7	**4**	0	0	եզ.գն.
2.	Հին աշխարհի պատմություն	1	9	**2**	0	2	եզ.գն.
3.	Նախնադարյան հասարակության պատմություն	1	3	**0**	8	3	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**2**	1	2	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			0			
1.	Հայոց պատմություն-1	2	5	**4**	0	0	եզ.գն.
2.	Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն - 1	2	4/3	**8**	4	0	առ.եզ/գն
3.	Եվրոպայի միջին դարերի պատմություն-1	2	6/5	**4**	0	0	եզ.գն.
4.	Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն	2	4	**8**	4	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**4**	2	0	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			2			

11. Կրթական ծրագիր՝ Դիզայն

	Դասընթացի անունը	**կիս-ամյակ**	**կրե-դիտ**	**գնահատման բաղադրիչներ՝ միավոր**			Նշում-ներ
				ինքն. աշխ.	**ընթ. ստուգ.**	**մասնակ-ցություն**	
1.	Նկարչություն-1	1	9	**3**	8	0	առ.եզ/գն
2.	Գծագրություն և հեռանկար-1	1	4	**0**	8	3	առ.ընթ/գն
3.	Պլաստիկ անատոմիա	1	2	**8**	4	0	առ.եզ/գն

4.	Գունատեսություն	1	2	**8**	0	3	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**3**	**3**	**2**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**2**			
1.	Նկարչություն-2	2	9	**3**	8	0	առ.եզ/գն
2.	Գծագրություն և հեռանկար-2	2	2	**0**	8	3	առ.ընթ/գն
3.	Նյութերի տեխնոլոգիա	2	4	**0**	8	3	առ.ընթ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**1**	3	2	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			1			

12.Կրթական ծրագիր՝ Դեկորատիվ կիրառական արվեստ

	Դասընթացի անունը	**կիս-ամյակ**	**կրե-դիտ**	**գնահատման բաղադրիչներ՝ միավոր**			Նշում-ներ
				ինքն. աշխ.	**ընթ. ստուգ.**	**մասնակ-ցություն**	
1.	Գծագրություն	1	4	**0**	8	3	առ.եզ/գն
2.	Նկարչություն-1	1	11	**3**	8	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**1**	**2**	**1**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**1**			
3.	Գունատեսություն	2	2	**8**	0	3	առ.ընթ/գն
4.	Գործվածքի գեղարվեստական ձևավորում-1	2	4	**8**	0	3	առ.եզ/գն
5.	Նկարչություն-2	2	11	**3**	8	0	առ.եզ/գն
	Բաղադրիչի ներառման քանակ			**3**	**1**	**2**	
	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ. միասին պարունակող			**1**			

Ընդհանուր մասնաճյուղում

	Կրթական ծրագիր	1-ին կիսամյակ					2-րդ կիսամյակ					Ընդամենը				
		դաս-ընթ. քան.	բաղադրիչը պարունակող դասընթացների քանակ				դաս-ընթ. քան.	բաղադրիչը պարունակող դասընթացների քանակ				դաս-ընթ. քան.	բաղադրիչը պարունակող դասընթացների քանակ			
			Ինքն. աշխ.	ընթ. ստ.	մասն.	ինքն/ա և ընթ/ստ		Ինքն. աշխ.	ընթ. ստ.	մասն.	ինքն/ա և ընթ/ստ		Ինքն. աշխ.	ընթ. ստ.	մասն.	ինքն/ա և ընթ/ստ
1	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	3	2	2	1	2	3	3	1	0	1	6	5	3	1	3
2	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	3	1	3	1	1	3	2	3	2	2	6	3	6	3	3
3	Զբոսաշրջություն	4	3	4	0	3	4	4	2	2	2	8	7	6	2	5
4	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	4	3	0	4	0	6	4	0	6	0	10	7	0	10	0
5	Հոգեբանություն	3	3	1	0	1	4	4	1	0	1	7	7	2	0	2
6	Հայոց լեզու և գրականություն	5	5	4	0	4	5	5	4	0	4	10	10	8	0	8
7	Անգլերեն լեզու և գրականություն	2	2	2	2	2	3	3	3	3	3	5	5	5	5	5
8	Ֆրանսերեն լեզու և գրականություն	3	3	3	3	3	2	2	2	2	2	5	5	5	5	5
9	Ռուսաց լեզու և գրականություն	6	1	6	5	1	4	2	2	2	0	10	3	8	7	1
10	Պատմություն	3	2	1	2	0	4	4	2	0	2	7	6	3	2	2
11	Դիզայն	4	3	3	2	2	3	1	3	2	1	7	4	6	4	3
12	Դեկորատիվ կիրառական արվեստ	2	1	2	1	1	3	3	1	2	1	5	4	3	3	2
	Ընդամենը՝	42	29	31	21	20	44	37	24	21	19	86	66	55	42	39
	Մասնաբաժինը (%)		69.0	73.8	50.0	47.6		84.1	54.5	47.7	43.2		76.7	64.0	48.8	45.3

	Կրթական ծրագրի անունը	դասընթացների քանակ	գնահատման բաղադրիչ ունեցող դասընթացների քանակ			
			ինքն. աշխ.	ընթ. ստուգում	մասնակցություն	Ինքն. աշխ. և ընթ.ստուգ.
1.	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	6	5	3	1	3
2.	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	6	3	6	3	3
3.	Զբոսաշրջություն	8	7	6	2	5
4.	Պատմություն	7	6	3	2	2
5.	Հայոց լեզու և գրականություն	10	10	8	0	8
6.	Անգլերեն լեզու և գրականություն	5	5	5	5	5
7.	Ֆրանսերեն լեզու և գրականություն	5	5	5	5	5
8.	Ռուսաց լեզու և գրականություն	10	3	8	7	1
9.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	10	7	0	10	0
10.	Հոգեբանություն	7	7	2	0	2
11.	Դիզայն	7	4	6	4	3
12.	Դեկորատիվ-կիրառական արվեստ	5	4	3	3	2
	Ընդամենը	86	66	55	42	39
			76.74%	63.95%	48.84%	45.35%

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին